ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ. ՏՆՏԵՍԱՒՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՎԱՐՍԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Մնանկության ինստիտուտի ձևավորումը և զարգացման ընթացքը: ՀՀ տնտեսությունում ցածր եկամտաբերությամբ, երբեմն վնասով աշխատող կամ պարտավորությունների բեռի տակ ճկած կազմակերպությունները չեն կարող դիմագրավել զարգացման ներկա փուլում առաջացող մարտահրավերներին և արդյունավետ կազմակերպել ու կառավարել բիզնես գործընթացները: Այդ տեսանկյունից կազմակերպությունների ֆինանսատնտեսական առողջացմանն ու կարգապահության բարձրացմանն ուղղված ձեռնարկումները պետք է դասվեն կայուն տնտեսական աճի ապահովման առանցքային խնդիրների շարքում:

ՀՀ կազմակերպությունների պարտավորությունները վերջին տարիներին աստիճանաբար աճել են և 2015 թ. կազմել են 2 տրիլիոն 691 մլն ՀՀ դրամ՝ կրեդիտորական պարտքերի 29,1 % մասնաբաժնով: Պարտքերի մնացած 70,9 %-ը բանկերից ստացված վարկերն ու փոխառություններն են: Ընդ որում, այդ 1 տրիլիոն 908 մլն դրամ պարտքերի գերակշիռ մասը բաժին է ընկնում ՀՀ ավելի քան 1300 խոշոր և միջին ոչ ֆինանսական կազմակերպությունների մի հատվածին՝ հետևյալ չափերով. մշակող արդյունաբերության կազմակերպություններին՝ 575,5 մլրդ դրամ, էլեկտրականություն, գազ, գոլորշի և լավորակ օդ մատակարարող կազմակերպություններին՝ 388,8 մլրդ դրամ, հանքարդյունաբերության և բացահանքեր շահագործող կազմակերպություններին՝ 288,5 մլրդ դրամ[1]:

Պարտավորությունների չափերի խնդրահարույց լինելու հանգամանքը ակնառու է դառնում, երբ այն համադրում ենք տվյալ տարվա արտաքին պետական պարտքի մեծության հետ, որը 2 տրիլիոն 88 մլրդ դրամ է[2]:

Անվճարունակության և սնանկության տնտեսաիրավական կարգավորումը բազմադարյան պատմություն ունի: Տնտեսության մեջ սնանկացման գործընթացի կարգավորումը տնտեսության կառավարման կարևորագույն գործիքներից մեկն է: Շուկայական տնտեսություններում առևտրային հարաբերությունների զարգացմանը համընթաց

[1] Տե՛ս «Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2016», էջ 396:
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 391:

սնանկացման կարգավորումը, բազմակի փուլեր անցելով, դեռևս մնում է առանցքային հիմնախնդիր:

Հին ժամանակներում սնանկացման կարգավորման գործընթացը գործնականում անլուծելի էր: Այսպես օրինակ՝ Հռոմում 326 թ. հրապարակվեց օրենք, որն արգելում էր անձի նկատմամբ բռնագրավում կիրառել, եթե պարտապանը երդվում էր, որ չունի թաքցրած որևէ գույք[3]: Ժամանակի ընթացքում հռոմեական մրցութային իրավունքը ստեղծեց նորմեր, որոնք վերաբերում էին գույքի վրա բռնագրավում տարածելուն: Գործընթացի զարգացման հիմնական խթանը առևտուրն էր, որի կատարելագործման հարցում մեծ ներդրում ունեցավ Իտալիան: Այստեղ 9-10-րդ դարերում առևտրային հարաբերությունները հասան բավականին բարձր մակարդակի: Հատկանշական է, որ իտալական իրավունքը պահպանեց կապը հռոմեականի հետ, միևնույն ժամանակ, փոփոխելով այն, մտցրեց նոր ինստիտուտներ և հասկացություններ: «Սնանկ» եզրն առաջացել է հենց Իտալիայում. «bancus» նշանակում է կրպակ, գրասենյակ, առևտրային կազմակերպություն, իսկ «ruptus»–ը առաջացել է «rotto» բառից, որը նշանակում է կոտրել, փակել գրասենյակը: Իտալական քաղաքներում պարտատերերը ակտիվ մասնակցություն էին ունենում մրցութային վարույթում, քանի որ նրանց էր փոխանցվում պարտապանի գույքի կառավարումը[4]:

Անվճարունակության օրենսդրության նպատակը տնտեսավարող սուբյեկտների գործունեության խթանումն է, մասնավորաբար՝ պայմաններ ստեղծելը, որպեսզի ֆինանսական անկայունության ի հայտ գալու դեպքում ընկերությունները կարողանան ինքնուրույն պայքարել իրենց վերակազմավորման համար կամ ոչ մեծ կորուստներով հեռանալ բիզնեսից: Քիչ չեն նաև կամավորության հիմքի վրա կատարված սնանկացման գործընթացները: Օրինակ՝ ԱՄՆ-ի իրավաբանական համակարգը ուսումնասիրողները փաստում են, որ անվճարունակության 90-95 %-ը այդ երկրում տեղի է ունենում կամավորության հիման վրա[5]:

Սնանկության ինստիտուտը անցել է երկարատև ուղի: Մինչև 20-րդ դարի 50-ական թվականները աշխարհում գործում էին սնանկության երկու մոդելներ՝ անգլոսաքսոնական, որը հիմնականում ուղղված էր պարտատերերի շահերի պաշտպանությանը, և ամերիկյան, որում առաջնայինը պարտապանի շահերի պաշտպանությունն էր: Այսօր գործում է սնանկության 5 մոդել՝ ծայրահեղ պարտապանական, ծայրահեղ պարտատիրական, դրանց միջանկյալ երկու տարբերակները և չեզոք[6]:

---

[3] Տե՛ս http://www.hmanoukian.com/files/old/207.pdf, էջ 5-6:

[4] Տե՛ս նույն տեղը:

[5] Տե՛ս նույն տեղը, էջ 10:

[6] Տե՛ս **Федорович П. В.** Банкротство. Правовое регулирование. Научно-практическое пособие. М., 2016 // https://www.bookvoed.ru/book?id=6638548, 2016, pdf.

Սնանկության մասին օրենսդրությունը Հայաստանի Հանրապետությունում առավել արագ փոփոխվող և զարգացող ինստիտուտներից է: Մինչանկախացման շրջանում Հայաստանը սնանկության կարգավորման իրավական տարբերակ չի ունեցել, քանի որ ամբողջատիրական պլանային համակարգում ձեռնարկությունների սնանկացումը բովանդակային առումով բացառված էր: ԽՍՀՄ փլուզումից հետո 1995 թ. ընդունված «Ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին» ՀՀ օրենքն առաջին փորձն էր: Մեկ տարի անց ընդունվեց «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության և ֆինանսական առողջացման մասին» ՀՀ օրենքը[7]: Վերջինս ավելի էր միտված տնտեսական զարգացման հեռանկարներին, կարգավորում էր սնանկացման ընթացակարգերը, որոշակիորեն հաշվի առնում անցումային ժամանակաշրջանի առանձնահատկությունները՝ սեփականաշնորհման ենթակա կազմակերպությունների սնանկացման վարույթ իրականացնելիս: Այնուհետև խնդրի առավել համապարփակ կարգավորման նպատակով 2003 թ. ընդունվեց «Անվճարունակության մասին» ՀՀ օրենքը, իսկ 2006 թ.՝ «Սնանկության մասին» ՀՀ նոր օրենքը, որը կարգավորում էր սնանկության իրավահարաբերությունները և իրավական նորմերը[8]:

Դեֆոլտ և սնանկացում. սնանկացման տեսակներն ու փուլերը: Համաձայն ՀՀ «Սնանկության մասին» օրենքի երրորդ հոդվածի՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝սեփական նախաձեռնությամբ կամ պարտատիրոջ պահանջով, եթե պարտապանն անվճարունակ է: Այլ կերպ՝ **սնանկության հիմքը անվճարունակությունն է:** Սնանկացմանը նախորդում է դեֆոլտը:

Դեֆոլտը անձի (կոնտրագենտի)՝ սեփական պարտավորությունները ժամանակին և (կամ) ամբողջ ծավալով կատարելու հնարավորության կամ ցանկության բացակայությունն է, որը հանգեցնում է պայմանագրի պայմանների խախտման և թույլ է տալիս վարկառուին սկսել գրավի առգրավման գործընթաց[9]: Կազմակերպության՝ դեֆոլտի վիճակում հայտնվելու հավանականությունը կարող է գնահատվել վարկանիշերի միջոցով, որոնք որոշվում են ֆինանսական հաշվետվության հիման վրա: «Անվճարունակություն» և «վարկունակություն» հասկացությունները սերտորեն փոխկապակցված են: Կազմակերպության անվճարունակությունը գնահատելու համար օգտագործվում են իրացվելիության, ֆինանսական կայունության և գնահատման այլ ցուցանիշներ: Անվճարունակության գնահատման գործընթացում խիստ կարևորվում է դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերլուծությունը:

---

[7] Տե՛ս www.arlis.am.
[8] Տե՛ս նույն տեղը:
[9] Տե՛ս http://www.aif.ru/dontknows/1233520, pdf

Սնանկացումը՝ որպես տնտեսահիրավական ոլորտին առնչվող գործընթաց, սերտորեն կապված է սոցիալական ոլորտի հետ. նախ՝ սոցիալական գործոնները որոշում են այն շահերը, որոնք պետք է ենթարկվեն իրավական պաշտպանության, այնուհետև՝ դրանց իրավական պաշտպանությամբ նույն սոցիալական ոլորտը բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվում և միաժամանակ որոշակի ազդեցություն ունենում իրավական զարգացումների վրա:

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են սնանկացման մի քանի տեսակներ[10]:

1.Իրական սնանկացում- այն իրավիճակն է, երբ ձեռնարկությունը ի զորու չէ վերականգնելու իր վճարունակությունը, քանզի ունի սեփական կապիտալի կորուստ: Կապիտալի կորստի բարձր մակարդակը, բաժնետոմսերի մեծ թվով վաճառքը սնանկացման ազդակներ են:

2.Բիզնես-սնանկացում- տերմինը գործածության մեջ մտավ ամերիկյան «Dun & Bradstreet» խոշորագույն կազմակերպության սնանկացումից հետո: Անվճարունակության պատճառով մեծ վնասներ հասցնելով պարտատերերին՝ այն դադարեցրեց իր գործունեությունը. որոշվեց, որ այն սնանկ է, չնայած պաշտոնապես դեռ այդպիսին չէր ճանաչվել[11]:

3.Ժամանակավոր սնանկացում-ձեռնարկության սնանկացման այնպիսի վիճակ է, երբ գերազանցվում է դեբիտորական պարտքը, և հնարավոր չի լինում վերականգնել տնտեսական կայուն վիճակը՝ ապահովելու երկարաժամկետ կայունությունը:

4.Միտումնավոր սնանկացում-երբ սեփական շահի համար կամ ի շահ այլ անձանց՝ կազմակերպության ղեկավարները տարբեր ձևերով «յուրացնում են» ընկերության ակտիվները՝ կազմակերպությանը հասցնելով սնանկացման:

5.Կեղծ սնանկացում-սա ձեռնարկության՝ սնանկության մասին կեղծ հայտարարությունն է՝ նպատակ ունենալով մոլորության մեջ գցել վարկատուներին, ձեռք բերել նրանց ֆինանսական պարտավորությունները կամ «մարել» ընկերության անմրցունակ արտադրանքի պարտքերը: Այսինքն՝ այս դեպքում, տարածելով կեղծ հայտարարություն, ձեռնարկությունը փորձում է քողարկել իր ակտիվները:

Առանձնացնում են կազմակերպությունների անվճարունակության հետևյալ փուլերը[12].

➢ **թաքնված անվճարունակություն**, որը բնութագրվում է կազմակերպության արժեքի նվազմամբ (արժեթղթերի գնի իջեցում) արտաքին

---

[10] Տե՛ս **Калинин А. С.** Упрощенные процедуры банкротства // "Проблемы цивилистики". Сборник статей. Выпуск 3. М., 2008:

[11] Տե՛ս http://www.grandars.ru/college/pravovedenie/bankrot.html,pdf.

[12] Տե՛ս **Лермонтов М. Ю.** Банкротство граждан и упрощенные процедуры банкротства. Последняя судебная практика // "Налоги" (газета), 2009, № 6 // https://cyberleninka.ru/article/n/bankrotstvo-grazhdan-i-uproschennye-protsedury-bankrotstva.

կամ ներքին ոչ բարենպաստ միտումների ի հայտ գալու պատճառով, որոնցից կարող են լինել արտադրանքի իրացումը, արտադրական հզորությունների ոչ արդյունավետ օգտագործումը և այլն: Սակայն տվյալ փուլում կազմակերպությունը դեռևս ի վիճակի է ինքնուրույն լուծելու ստեղծված խնդիրները՝ օգտագործելով գնային քաղաքականության մարքետինգային մեխանիզմները և այլն,

➢ **ֆինանսական անկայունության փուլ,** երբ առկա են առավել խորացված խնդիրներ: Կրճատվում են դրամական մուտքերը կազմակերպության հաշվեհամարներին, մեծանում են դեբիտորական պարտքը, փոխառու միջոցների ծավալը, կրճատվում են սեփական շրջանառու միջոցները և այլն: Այս փուլում, եթե կազմակերպության գործունեության ֆինանսական ցուցանիշների վատացումը կախված է օբյեկտիվ պատճառներից (արտադրանքի իրացման սեզոնայնություն և այլն), և վերջինս ի վիճակի է մարելու ժամկետանց պարտավորությունները սահմանված ժամկետում, ապա անվճարունակությունը գնահատվում է որպես կարճաժամկետ: Այլ պարագաներում անվճարունակությունը որակվում է որպես երկարաժամկետ,

➢ **ակնհայտ սնանկացում**, երբ սնանկացումը դառնում է իրավաբանորեն անխուսափելի և ակնհայտ փաստ, երբ կազմակերպության բոլոր միջոցները, շրջանառու և ոչ շրջանառու ակտիվները բավարար չեն սեփական բյուջեի, վարկառուների, բաժնետերերի, անձնակազմի և այլ ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորությունները մարելու համար: Այս դեպքում կազմակերպությունը կա՛մ վերակազմավորվում է ֆինանսական առողջացման մեթոդով, կա՛մ լուծարվում:

Անվճարունակության և սնանկացման տնտեսահիրավական կարգավորման նպատակները: Ինչպես ցույց է տալիս համաշխարհային պրակտիկան, ձեռնարկության անվճարունակության կանխարգելմանն ուղղված ծրագրերը ենթադրում են մի շարք գործընթացներ.

✓ սնանկացման համակարգի սուբյեկտների շահերը ներկայացնող արդյունավետ մեխանիզմների ստեղծում և գործադրում,

✓ կայուն եկամուտ ունեցող և վճարունակ ձեռնարկությունների հնարավորինս պահպանում,

✓ բիզնեսի «վերածննդի» համար միջոցառումների համակարգի ստեղծում,

✓ սնանկացման համակարգի սուբյեկտների իրավունքների և պարտականությունների միասնական և հուսալի համակարգի ստեղծում,

✓ ժամանակավոր անվճարունակության կամ սնանկացման կանխարգելման համար ներդրումային համակարգի ստեղծում,

✓ գործընկեր կազմակերպությունների միջև փոխհարաբերությունների խթանում և զարգացում, ֆինանսական վեճերի լուծման ընթացակարգի ընդունում,

✓ վարչական և իրավական համակարգերի արագացված աշխատանք,

✓ առանց բիզնեսի լուծարման՝ պարտապանի կողմից իր պարտավորությունների կատարում:

Սնանկացման գործընթացի խնդիրն է լուծարել անարդյունավետ և անկայուն գործունեություն ծավալող ձեռնարկությունները, որին հասնում են համակողմանի ուղղորդված գործողությունների միջոցով՝ համագործակցելով պարտատերերի, ֆինանսական մարմինների և գործընկերների հետ: Սնանկությունը իրականացնող մարմինների հիմնական նպատակը ձեռնարկության արտադրական ներուժի գործադրումն է՝ ի նպաստ ֆինանսական կայունության և սնանկացման կանխարգելման:

Տնտեսության տարբեր մակարդակներում սնանկության կանխման և կառավարման համակարգի նպատակները ներկայացվում են հետևյալ կերպ.

Տնտեսության մակարդակը	Սնանկության կանխման և կառավարման նպատակները
1.Մակրոմակարդակ	տնտեսական աճ ու զարգացում, մրցունակության և տնտեսական հարաբերությունների կայունացում,
2.Մեզոմակարդակ	ազգային տնտեսության որևէ տարածաշրջանի և ճյուղի համաչափ զարգացում, վերջիններիս շահերի պաշտպանություն,
3.Միկրոմակարդակ	պարտատերերի և պարտապանների շահերի պաշտպանություն, պարտապանի բիզնես-գործընթացի կարգավորում:

Մասնավորեցման ծրագրով 1998-2016 թթ. ընթացքում ՀՀ կազմակերպությունների սնանկացման գործընթացի քննական վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել սնանկացման կանխարգելման հետևյալ սկզբունքները[13].

✓ *կազմակերպության կենսունակության ապահովման բավարար ֆինանսական միջոցների առկայությունը.* անվճարունակ կազմակերպություններին անհրաժեշտ են դրամական մուտքեր, իսկ արդեն սնանկացման եզրին հայտնված կազմակերպություններին՝ կարգավորման այլ մեխանիզմներ: Անվճարունակ կազմակերպության համար ֆինանսավորման աղբյուր կարող են լինել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին դրամական մուտքերը, իսկ երբեմն էլ՝ վարկային կազմակերպությունները,

[13] Քննական վերլուծության համար հիմք են պետական գույքի մասնավորեցման ՀՀ օրենքները նշված ժամանակահատվածի համար, երբ որոշակի տարիներին դիտարկվել են լուծարման գործընթացներն ավարտած կամ լուծարման գործընթացում գտնված կազմակերպությունների թիվը և դրանց ակտիվները, ինչպես նաև դատարաններ ներկայացված հայցադիմումների քանակը:

✓ *մրցունակությունը.* կազմակերպություններին ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս արագ արձագանքելու շուկայի պահանջներին: Երբեմն կազմակերպության լայնածավալ խոշորացումը խանգարում է արագ արձագանքել շուկայի պահանջներին, որը հանգեցնում է սնանկացման,

✓ *անվճարունակության ընթացակարգի կրճատումը.* այն չպետք է գերազանցի 3-4 ամիս ժամանակամիջոցը,

✓ *կազմակերպությունների անձնակազմի մասնագիտական հմտությունները և կառավարման բարձր մակարդակը.* այս գործոններին բացակայությունը արդեն իսկ բացասական ազդակ է հաղորդում կազմակերպության արդյունավետ գործունեությանը:

Կատարողական վարույթ, սնանկության վարույթ (մորատորիում): Սնանկության իրավահարաբերությունները կարգավորող նորմերը ՀՀ-ում չեն բխում մեկ միասնական իրավական հայեցակարգ ներկայացնող և սոցիալական պաշտպանությանն ուղղված մոդելից: Մասնավորաբար, ՀՀ կատարողական վարույթը և սնանկության վարույթը, ունենալով պարտատերերի պարտավորությունների կատարմանն ուղղված որոշակի ընդհանրություններ, այդուհանդերձ տարբերվում են: Սնանկության վարույթն ունի նաև այնպիսի լրացուցիչ խնդիրներ, ինչպիսիք են անբարեխիղճ պարտապան-տնտեսավարող սուբյեկտներին տնտեսական շրջանառությունից դուրս բերելը, իսկ պարտապանի ֆինանսական առողջացման հնարավորության դեպքում՝ տնտեսական լիարժեք շրջանառություն վերադարձնելը:

Կարելի է առանձնացնել կատարողական վարույթի և սնանկության վարույթի երկու հիմնական ուղղություն[14].

✓ պարտապանի անվճարունակության հատկանիշների բացահայտում կատարողական վարույթում և սնանկության վարույթի հարուցման նախադրյալների ստեղծում,

✓ կատարողական վարույթից «անկախ» սնանկության վարույթի հարուցում և դրա ազդեցությունը կատարողական վարույթի վրա:

Մինչև վերը նշված օրենսդրական փոփոխությունները հարկադիր կատարողն ինքը պարտավոր էր անհապաղ կասեցնել կատարողական վարույթը և դիմում ներկայացնել դատարան պարտապանին սնանկ ճանաչելու մասին, եթե պարտապանի գույքը չէր ծածկում պահանջատերերի պահանջները: Ընդ որում՝ անբավարարության չափը, այսինքն՝ պարտավորությունների և գույքի արժեքի նվազագույն տարբերությունը, որի դեպքում պարտապանը ենթակա էր սնանկ ճանաչվելու, կազմում էր 500.000 դրամ[15]: 2011 թ. փետրվարին ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխություններով կատարողական վարույթում պարտապանի անվճարունակության հատկանիշներ ի հայտ գալու

[14] Տե՛ս http://www.harkadir.am/view-lang-arm-article-161.html.
[15] Տե՛ս նույն տեղը:

հետևանքների կարգավորումը փոխվեց: Գույքի անբավարարության դեպքում հարկադիր կատարողը 60-օրյա ժամկետով կասեցնում է կատարողական վարույթը և առաջարկում է վարույթի կողմերին դատարան ներկայացնել պարտապանի սնանկության դիմում: Կատարողական վարույթը կասեցնելու մասին որոշումը հրապարակվում է հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում: Եթե կասեցման ընթացքում պահանջատերը, պարտապանը կամ այլ անձինք պարտապանին սնանկ ճանաչելու դիմում չեն ներկայացնում, ապա հարկադիր կատարողը վերսկսում և իրականացնում է կատարողական վարույթը ընդհանուր կանոնների համաձայն[16]:

Կատարողական և սնանկության վարույթների հարաբերակցության պարզաբանման մյուս ուղղությունը սնանկության վարույթի «ազդեցության» որոշարկումն է կատարողական վարույթի վրա: Այդ ազդեցության հիմքը սնանկության վարույթում պարտատերերի պահանջների բավարարման սառեցումն է, որը համակարգի շրջանակներում անվանում են **մորատորիում**:

Հաշվի առնելով, որ մորատորիումի գործողությունը տարածվում է միայն գույքային բռնագանձումների վերաբերյալ կատարողական վարույթների վրա՝ հետաքրքրություն է ներկայացնում մորատորիումի պայմաններում հայցի ապահովման կատարողական վարույթների հետագա ընթացքը[17]:

Սնանկացման գործընթացների կարգավորումը տարածաշրջանի երկրներում: Միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու համար բարելավումների կարիք ունեն տնտեսահիրավական կարգավորումները և օրենքները սնանկացման գործընթացի ողջ երկայնքով՝ վարույթ ընդունելուց մինչև վերակազմակերպման գործընթացները, որում ծախսերի նվազեցման և վերականգնման մակարդակի վրա մեծ ազդեցություն ունեն ժամկետների կրճատումը, ինչպես նաև սնանկացման գործերի վարումը մասնագիտացված դատարանների կողմից: Անհրաժեշտ է նաև ֆորմալ կարգավորման ենթարկել արտադատարանային մեխանիզմները՝ սնանկացման գործընթացի կառավարման ծախսերի արդյունավետությունն ապահովելու համար:

Ստորև ներկայացվում է տարածաշրջանային որոշ երկրներում սնանկացման քանակական գնահատականը: Սանդղակում լավագույն փորձի սահմանագիծը 5 բալ է: Համաշխարհային բանկի՝ «Սնանկության ընթացակարգեր և երկրորդ հնարավորություն» (Doing Business) զեկույցում Հայաստանը 189 երկրների շարքում 69-րդ վարկանիշային դիրքում է՝ «Սնանկության ճանաչում» բաղադրիչով[18]:

---

[16] Տե՛ս http://www.harkadir.am
[17] Տե՛ս նույն տեղը:
[18] Տե՛ս http://www.doingbusiness.org/data.

Նկար 1

Սնանկացման կարգավորման մակարդակները տարածաշրջանի երկրներում



Այս երկրների շարքում ՀՀ-ն երկրորդ լավագույն արդյունքն է արձանագրել սնանկության ժամանակի (1.9 տարի) և սնանկության վարույթներում կրած ծախսերի առումով: Բայցևայնպես, գրավառուների կորուստների փոխհատուցման մակարդակը կազմում է ՏՀԶԿ միջին ցուցանիշի գրեթե կեսը: Սնանկության գործընթացները կարգավորվում են 2006-ին ընդունված և 2007-ին փոփոխված՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով[19]: Բանկերի և այլ ֆինանսական կառույցների համար գործում են առանձին իրավական շրջանակներ, մինչդեռ պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների նկատմամբ կիրառվում է ընդհանուր իրավակարգավորում:

Անվճարունակության տնտեսահիրավական կարգավորման ցուցանիշով Հայաստանը, տարածաշրջանի երկրների համեմատ, միջինից բարձր դիրք է զբաղեցնում՝ առաջ անցնելով Վրաստանից, Ադրբեջանից և Ուկրաինայից: Մոլդովան առաջատար դիրքում է՝ ունենալով միջինը 12 արժեք, որը պայմանավորված է սնանկացման կարգավորման մի շարք մեխանիզմների արդյունավետ կիրառմամբ: Նման ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս առանձնացնելու տարածաշրջանի երկրների անվճարունակության իրավատնտեսական կարգավորման որոշ խնդիրներ:

[19] Տե՛ս http://www.arlis.am

Նկար 2

Անվճարունակության կարգավորման ցուցանիշները տարածաշրջանի երկրներում[20]



Ստորև բերված են այդ հիմնախնդիրներից կարևորագույնները.

✓ Մինչ սնանկացման գործընթացը սկսելը որոշակի մեխանիզմների մշակումն ու ներդնումը տնտեսավարող սուբյեկտների կենսունակության ապահովման նպատակով. անհրաժեշտ է տնտեսահիրավական կարգավորումների միջոցով նպաստել՝ ձեռնարկությունը մնա բիզնեսում: Կարգավորման հիմնախնդրի նման ընկալումը բացատրվում է նրանով, որ ժամանակակից ընկերությունների համար բնութագրական է սեփականության և կառավարման ոչ հստակ տարանջատումը, որի պատճառով ֆինանսական բարդությունները կարող են արդյունք լինել վատ կառավարման և ոչ սեփականատերերի գործողությունների:

✓ Անվճարունակության գործընթացի վերահսկողության ապահովումը ակտիվների առավել արդյունավետ օգտագործման նպատակով. նման խնդիր է առաջանում, երբ անվճարունակ ձեռնարկությունն ունի մեկից ավելի սեփականատեր: Այս իրավիճակում օրենսդրությունը պետք է նախատեսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան առանց խտրականության իրականացնելու սեփականատերերի շահերի պաշտպանությունը:

✓ Պարտատերերի շահերի պաշտպանության ապահովումը՝ նրանց պահանջների առավելագույն բավարարմամբ:

---

[20] Տվյալներն ըստ http://www.doingbusiness.org/data կայքէջի: Տե՛ս նաև՝ **Саргсян Г., Маркосян А., Сидоров В., Ядгаров Я.** Трансформационные аспекты феномена рыночного хозяйства. Ер., 2016, էջ 577-580:

✓ Պարտատիրոջը կառավարչի կողմից տեղեկատվության հասանելիության ապահովումը:

✓ Սնանկության վարույթ սկսելուց հետո անվճարունակ պարտապանին վարկ ստանալու հնարավորության ընձեռումը. կարգավորման այս ձևը հնարավորություն կտա պարտապանին «ծածկելու» իր կրեդիտորական պարտքերը:

✓ Սնանկացման գործընթացի վերափոխման քաղաքականության մշակումը պետք է իրականացվի կորպորատիվ կառավարման լավագույն փորձի արմատավորմանը զուգընթաց, այն հաշվով, որ պարտապան ձեռնարկության գույքի հարկադիր օտարումը ենթադրի նաև բաժնեմասի օտարում: Այս գործընթացները կարող են արագացնել կազմակերպության անվճարունակության խնդրի կարգավորումը:

Սնանկացման խնդրի լուծումը պետք է փնտրել ոչ միայն համապատասխան օրենքը բարելավելու, այլև դրան առնչվող օրենքներով և նորմատիվային ակտերով առաջնորդվելու մշակույթի մեջ: Հարկ է նշել, որ 2012 թ. գնահատումից ի վեր՝ այս առումով մեծածավալ մշակումներ չեն կատարվել, ուստի իրավական դաշտը դեռևս ունի բաց կողմեր: Հետազոտությունները ցույց են տալիս, որ անվճարունակ կամ սնանկ ճանաչված կազմակերպությունների ֆինանսական առողջացումը հիմնվում է վարկավորման վրա և հիմնականում ավարտվում է լուծարմամբ, թեև օրենքը նախատեսում է առողջացում: Սնանկության դիմում ներկայացնելուց հետո ֆինանսավորման մեխանիզմների բացակայությունը այս առումով նոր խնդիրներ է առաջացնում:

Մեկ այլ խնդիր է ՀՀ օրենքի դրույթների ոչ լիարժեք լինելը: Մասնավորապես, հստակեցման կարիք ունեն գնահատման ենթակա գործարքները: Վարկատուների իրավունքներն ու մասնակցությունը ևս սահմանափակ են, իսկ օրենքը չի պարունակում անվճարունակության գործի քննության ընթացքում վերջիններիս տեղեկատվության տրամադրումը երաշխավորող դրույթներ: Ակնհայտ է, որ սնանկացման գործընթացի տնտեսահիրավական պրակտիկան բարելավելու կարևոր ազդակներից մեկը դատարանների մասնագիտացվածությունն է:

Եթե հակիրճ անդրադարձ կատարենք ոլորտին առնչվող դատահիրավական բարեփոխումներին, ապա կտեսնենք, որ իրավական փաստաթղթերում սնանկությունը ներկայացվում է որպես դատարանի կողմից հաստատված պարտապանի անկարողություն, երբ վերջինս ի զորու չէ ամբողջությամբ բավարարելու պարտատերերի պահանջները կամ կատարելու պարտադիր վճարումները օրենքով նախատեսված ժամկետներում:

Որոշակի առանձնահատկություններ կան պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների սնանկացման գործընթացների կարգավորման ընթացակարգերում, որոնց համար կարևոր պայման է ֆինանսական առողջացման պլանի առկայությունը: Երբ

քննության է առնվում պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների վճարունակության գործակցի դինամիկան ըստ տարիների[21], երևում է, որ այն էապես զիջում է թույլատրված սահմանային շեմը, որի պատճառը ֆինանսական միջոցների ոչ բավարար լինելն է և ընթացիկ վճարունակության դժվարությունները: Կան առանձին բացառություններ, մասնավորապես՝ կազմակերպությունների վճարունակության գործակիցը բարձր է եղել 2004-ին՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների շուրջ 1/3-ում:

Ինչպես նշվել է, սնանկացման գործունեությունը սահմանում է սնանկացման, ֆինանսական առողջացման կամ լուծարման գործընթաց, որն իրականանում է դատական վերահսկողության ներքո: ՀՀ-ում իրականացված դատաիրավական բարեփոխումների շնորհիվ ստեղծվեց նոր դատական համակարգ, այդ թվում՝ նաև ՀՀ տնտեսական գործերով վերաքննիչ դատարան, հնարավորություն ստեղծվեց կիրառելու տնտեսական և մասնավորապես սնանկացման մասին օրենսդրությունը: Սակայն առաջացած օրենսդրական հակասությունները հանգեցրին այս գործընթացի կասեցմանը: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 71 հոդվածի՝ իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու հիմքերը և կարգը սահմանվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով[22]: Նույն դրույթները ֆիզիկական անձանց վերաբերյալ արձանագրում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 28 հոդվածը: Այլ պետությունների օրենսդրություններում ևս (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Չինաստան, Լեհաստան) լուծվում է միայն այն խնդիրը, թե ինչ հիմքերի առկայության դեպքում այս կամ այն սուբյեկտը կարող է դիմել դատարան՝ անձին անվճարունակ ճանաչելու պահանջով: Որոշ երկրներում անվճարունակ հայտարարելու հիմքերի առկայության հարցը լուծում է դատարանը: Ընդ որում դատարանը իրականացնում է պարտապանի գույքի գնահատում՝ որոշելու պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունը:

Ներկայումս ոչ միայն Հայաստանում, այլև ԱՊՀ այլ պետություններում ընթանում է անվճարունակության մասին օրենսդրության փոփոխությունների գործընթաց: Շատ կարևոր է, որ այդ փոփոխություններում բացառվի խոշոր ձեռնարկությունների՝ վճարումներ չկատարելու կամ գույքային պատասխանատվությունից խուսափելու հնարավորությունը և ըստ այդմ՝ խրախուսվի պարտականությունները ժամանակին կատարելը: Որոշ դեպքերում պարտապանի նկատմամբ ունեցած դրամական պահանջների վերաբերյալ գործերը ենթակա են քննության քաղաքացիական դատավարության ընդհանուր վարույթի կարգի համաձայն: Հաջորդ կարևորագույն խնդիրն այն է, որ պարտա-

[21] Տվյալների համար հիմք են ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող տեղեկագրերն ըստ տարիների:

[22] Տե՛ս www.arlis.am

տերերի ժողովը և խորհուրդը նշանակալի ազդեցություն չեն գործում սնանկության գործընթացի վրա անհրաժեշտ լիազորություններ չունենալու պատճառով: Կարծում ենք, որ պետք է տարանջատվեն խորհրդի և ժողովի իրավասությունները:

Սնանկության ինստիտուտի կատարելագործման համար անհրաժեշտ է բարելավել սնանկության գործն ավարտելու եղանակներից մեկը՝ հաշտության համաձայնություն ներդնելը և դրա լիարժեք իրավական կարգավորումը:

Այսպիսով, վերլուծելով կազմակերպությունների տնտեսական, սոցիալական ու իրավական առումներով դրսևորվող «սնանկացում» հասկացության կարևորությունը, այն պայմանավորող գործոնների համախումբը, բացահայտելով դրա տնտեսաիրավական կարգավորման իրական պատկերը, կարելի է եզրահանգել, որ այս ոլորտում կարգավորման անկատար օրենքների ու կառուցակարգերի կիրարկումը կարող է սպառնալ նաև տնտեսական անվտանգությանը, կայուն տնտեսական աճին:

Բանալի բառեր – *կազմակերպության անվճարունակություն, սնանկություն, դեֆոլտ, կարգավորում, սնանկության վարույթ, մորատորիում*

ВАРСЕНИК САРГСЯН – ***Банкротство: некоторые проблемы экономико-правового регулирования и управления.*** – В статье рассмотрены основные положения экономико-правового регулирования процессов банкротства, предопределяющие несостоятельность отдельных организаций. Выявлены ключевые механизмы предотвращения, регулирования и управления банкротством. В их основу положены наиболее рациональные способы, почерпнутые из международного опыта, с учётом присущей Армении специфики.

Ключевые слова: *несостоятельность организации, банкротство, дефолт, регулирование, мораторий*

VARSENIK SARGSYAN – ***Bankruptcy: Some Problems of Economic and Legal Regulation and Management.*** **–** The article presents the main prerequisites of the insolvency of the RA organizations and examines the main provisions of economic and legal regulation of bankruptcy. Identifying some of the key issues of bankruptcy prevention and management, it outlines the main mechanisms of bankruptcy regulation and shows the most comprehensive solutions to the problem. The latter are based on the localization of the best international experience, taking into account the specifics of the settlement of the bankruptcy process in RA.

Key words: *insolvency of the organization, bankruptcy, default, settelement, bankruptcy proceedings, moratorium*